

Արձանագրություն թիվ 2

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2022թ սեպտեմբերի 20-ին

Օրակարգը՝

1. Ա. Ս.Գալստյանի դիմումի քննարկումը:
2. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2022-2023 ուս.տարվա աշխատանքային օրակարգի հաստատում:
3. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդին մասնակցում են 16-անդամից 15-ը: Այսօր չի մասնակցում Ա.Պետրոսյանը, ով ի պաշտոնե էր մասնակցում: Նա հրաժարականի դիմում է ներկայացրել և չի զբաղեցնում ՈԻԳԸ-ի նախագահի պաշտոնը: Մյուս գիտխորհրդին կունենանք մասնակի փոփոխված կազմ:

1. Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղուչիկյան,- Դուք ստացել եք հետևյալ օրակարգը, սակայն օրակարգից հանվում է 1-ին կետը՝ դիմումի քննարկումը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ քննարկման խնդիրը վերացված է, հետևաբար նորից անդրադառնալ մի հարցի, որը ըստ էության լուծված է՝ անիմաստ է:

Ս.Վ.Ղուչիկյան- Հարգելի գործընկերներ ուզում եմ տեղեկացնել և վստահեցնել, որ գիտխորհուրդ մտնելու են միայն այն հարցերը, որոնք քննարկվել են ամբիոններում, ունեն համապատասխան քաղվածք և ուղեկցող տվյալներ: Անցնենք մեր օրակարգի 2-րդ կետին: Բոլորդ ստացել եք Ֆակուլտետի գիտական խորհրդի 2022-2023 ուս.տարվա աշխատանքային օրակարգի ուղղված և համալրված օրինակը: Այս տարվա աշխատանքը դնում ենք քվեարկության: Կողմ 15 դեմ, ձեռնպահ չունենք:

3. Պրոֆեսոր Ս.Վ.Ղուչիկյան ,- Օրակարգի երրորդ հարցը՝ ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների

պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին:

-Շ.Ա.Մարգարյան - Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնում ընթանում են վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքներն ընթանում են շատ դանդաղ: Հանգստյան օրերին ամբիոնի աշխատակիցների միահամուռ ուժերով հնարավոր եղավ մաքրել 108 լաբորատորիան և պատրաստել ուսումնական պրոցեսին 111 և 113 լաբորատորիաները մեկ շաբաթից պատրաստ կլինեն ուսումնական պրոցեսին: 107 լաբորատորիայում (Ֆիլիպ Մորիս ֆիրմայի կողմից ֆինանսավորվող) աշխատանքները կատարված չեն:

-Տ.Վ.Ղոչիկյան – Որտեղ էք անում լաբորատոր աշխատանքները

-Շ.Ա.Մարգարյան- Լաբորատոր աշխատանքները կատարվում են հետազոտական լաբորատորիաներում և ուսումնական գործընթացը չի տուժում:

Նիստի նախագահ Տ.Վ.Ղոչիկյան - Ինչ փոփոխություններ էք կատարել լաբորատոր աշխատանքների ծրագրերում

Կոլոիդ և ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյան – Փոփոխություններ կատարել ենք երեք ուղղություններով՝ Էլեկտրաքիմիա, լուծույթների քիմիա և կոլոիդ քիմիա բաժիններում: Այստեղ խնդիր ունենք, որը պայմանավորված է լուծույթների բաժնում կատարվող փոփոխություններով: Բինար լուծույթների ուսումնասիրության համար անհրաժեշտ է հեղուկ ազոտ: Քանի որ քանակը քիչ է 1-2 դյուար ոչ մի ներկրող նման քիչ քանակի համար տենդերին չի մասնակցում:

Տ.Վ.Ղոչիկյան – Իսկ եթե տենդերի փոխարեն ծառայության մատուցման պայմանագիր կնքե՞ք: Փորձեք, եթե հնարավոր չեղավ այլ տարբերակ կմտածենք:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ - Ա.Ի.Մարտիրյան

Մեզ մոտ ամեն ինչ ընթանում է նորմալ հունով: Առայժմ վերանորոգման խնդիր չունենք, սակայն տեսնելով ֆիզ.կոլ քիմիայի ամբիոնի լաբորատորիաների վիճակը՝ չենք համաձայնվի միանգամից ամբիոնի բոլոր լաբորատորիաներում վերանորոգում սկսելու հետ: Ծրագրերում փոփոխությունը պայմանավորված է նորագույն սարքերի կիրառմամբ:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան Օրգանական քիմիայի ամբիոնը աշխատանքները սկսել է նորմալ ընթացքով: Ունենք ծրագրային թարմացումներ, որոնք ամփոփ տեսքով կներկայացվեն: Ամբիոնում վերանորոգումը նախատեսվում է հաջորդ տարի, սակայն (համաձայն եմ Ա.Ի.Մարտիրոսյանի հետ) կառաջարկենք ավտերնատիվ տարբերակ: Թող վերանորոգումը սկսեն միանգամից 2 ամբիոններում 1/1 տարբերակով, որպեսզի ուսումնական պրոցեսը կաթվածի չենթարկվի:

Տ.Վ.Ղոչիկյան – ընթացիկ հարցերից է նաև անվանական կրթաթոշակի հարցը: Փոխդեկանի հետ միասին հավաքագրել ենք բոլոր ուսանողների ՄՈԳ-րը: Անվանական կրթաթոշակի համար ունենք երկու հավակնորդ՝ 19.75 մոզով Վարդանյան Շուշաննա մագիստրոս 2-րդ կուրս և 19.35 մոզով Նիկողոսյան Հասմիկ բակալավր 4-րդ կուրս:

Որոշեցին - ա/ Շարունակել «Քիմիա» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Շուշաննա Վանիկի Վարդանյանի "Աիդա Ավետիսյանի" անվան կրթաթոշակը:

բ/ Նշանակել «Քիմիա» բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Հասմիկ Հակոբի Նիկողոսյանին "Ստեփան Ղամբարյանի" անվան կրթաթոշակը:

Տ.Վ.Ղոչիկյան - կարևոր հարց է ավարտական աշխատանքների համար ուսանողների բաշխման հարցը՝ ամբիոններում : Մենք ունենք 3-րդ կուրս քիմիկ 9 ուսանող և սննդի անվտանգություն 6 ուսանող: Առաջարկվում է մյուս տարի յուրաքանչյուր ամբիոնում ավարտական աշխատանք կատարեն 3 ուսանող քիմիա բաժնից և 2 ուսանող սննդի անվտանգություն բաժնից: Առաջարկությունը դրվեց քվեարկության: քվարկությանը մասնակցել էին 14 հոգի 3 դեմ, 11 կողմ:

Գիտխորհրդի անդամներից առաջարկ եղավ մշակել, ավարտական աշխատանքների ամբիոններում տեղաբախշման ներքին կանոնակարգ՝ հետագա տարիների համար:

Նիստի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Նիստի քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան